



# Ֆիզիկական ԿՈՆՈՔՎԻՈՒՄ -Ժ-

Չորեքշաբթի | 27 ապրիլի 2022 | 15:00  
Երևանի պետական համալսարան, Ֆիզիկայի ֆակուլտետ

## Վահագն Գուրզադյան

Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա

Ելույթի թեման`

### Հարաբերականության ընդհանուր տեսության ստուգում արբանյակներով և գրավիտացիայի հաստատուններ

Տիեզերքում մութ էներգիայի և մութ նյութի չպարզաբանված բնույթի պայմաններում հատկապես կարևորվում է Հարաբերականության ընդհանուր տեսության /ՀՇՏ/ կանխատեսումների մեծ ճշգրտությամբ փորձարարական ստուգումը, ինչպես նաև մոդիֆիկացված գրավիտացիայի տարբերակների հետազոտումը: Կքննարկվեն լազերային անդրադարձման արբանյակների միջոցով կատարվող գիտափորձերը` ՀՇՏ-ով կանխատեսված Լենզե-Թիրինգի երևույթի գրանցման նպատակով, ստացված արդյունքները, դրանցում այլ բնույթի` մասնավորապես Երկրի մակընթացային խոտորումների ներդրումները: Կքննարկվի նաև ՀՇՏ թույլ դաշտի մոտավորության մոդիֆիկացված տարբերակ, որ ներառում է կոսմոլոգիական հաստատունը, դրա հետ կապված դիտողական կանխատեսումներով, ստացված սահմանափակումներով` գալակտիկաների խմբերի, կույտերի, մեծ տարածքային հոսքերի վերաբերյալ: